Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 697 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՊՐՈԹԵԶՆԵՐԻ ՊԱՏՅԱՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է արտադրել պրոթեզների պատյաններ 3D տպիչների օգնությամբ, որոնք կտրամադրվեն 44-օրյա պատերազմի հետևանքով ստորին վերջույթների անդամահատում ստացած զինվորներին: Պատյանները պրոթեզին հաղորդում են կոկիկ տեսք, պաշտպանում են փոշուց և վնասվածքներից:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Օգնի» սոցիալական կրթական հասարակական կազմակերպություն (քաղ. Երևան, Բագրևանդ 21/1, ՀՎՀՀ՝ 02840848)
4.	Ծրագիրը կատարողը	«Օգնի» սոցիալական կրթական հասարակական կազմակերպություն (քաղ. Երևան, Բագրևանդ 21/1, ՀՎՀՀ՝ 02840848)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, սոցիալական աջակցություն
6.	Ծրագրի բյուջեն	1,430,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	44-օրյա պատերազմի հետևանքով ստորին վերջույթների անդամահատում ստացած զինվորներ

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 17-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Պրոթեզների պատյանների արտադրություն 3D տպիչների օգնությամբ շուրջ 1,430,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 17-ը
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է ներկրել 3D տպիչ սարքեր, պատյանների մագնիսներ և 3D տպիչի թելեր մասնավորապես ներկրվելու են՝ 2 հատ 3D տպիչ սարքեր շուրջ՝ 790,000 դրամ, 100 հատ մագնիս շուրջ՝ 630,000 դրամ 20 հատ 3D տպիչի թելեր շուրջ՝ 10,000 դրամ,
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, առողջապահության նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարություն 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

10.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ